ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-8

ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հրատապ բաց մրցույթով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան գյուղի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ վարչական շենքերի քանդման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 24.11.2023թ. N 470/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 10.01.2024թ. ժամը 16-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Դ.Հարությունյանը, Հ.Ոսկանյանը Գ.Գևորգյանը, Կ.Բայբուրտյանը և քարտուղար Գ.Ղազարյանը: Բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ Ն.Մնոյանը: Հանձնաժողովի նիստը նախագահի բացակայության պատճառով նախագահում էր ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված Դ.Հարությունյանը:

<u>Հարցման ուսումնասիրության և հայտի վերագնահատման մասին</u>

-Գնահատող հանձնաժողովի նիստը նախագահող Դ.Հարությունյանը տեղեկացրեց, որ գնահատող հանձնաժողովը կասեցրել էր նիստը և 09.01.2024թ. թիվ Ն/18-4/4612-2024 գրությամբ (կցվում է) գրավոր դիմել էր ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությանը՝ ստանալու իրավական եզրակացություն, արդյոք «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման, թե ոչ և պատվիրատուն իրավասու է «Երվադա» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչությունը 09.01.2024թ. թիվ Ն/11-1/5608-2024 գրությամբ (կցվում է) բարձրացրած հարցի վերաբերյալ տվել է իրավական եզրակացություն, համաձայն որի «Երվադա» ՍՊԸ-ն չունի համապատասխան լիցենզիա և գնման գործընթացին մասնակցում է ենթակապալի պայմանագրով, պայմանով, որ լիցեզիայի պահանջին բավարարում է ենթակապալառուն՝ մասնակցի՝ համապատասխան գործունեությամբ զբաղվելու լիցենզիայի բացակայության հանգամանքով պայմանավորված վերջինիս հայտը ենթակա է մերժման:

Առաջնորդվելով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից տրված իրավական եզրակացությամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Երվադա» ՍՊԸ-ն հայտով չի ներկայացրել ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. «Երվադա» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ մասնակիցը չունի հրավերով պահանջվող համապատասխան լիցենզիա:

2. Սահմանված ժամկետում դիմել «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ պահանջելով բենեֆիցարին վճարել «Երվադա» ՍՊԸ-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացված բանկային երաշխիքում նշված է 31 169 151 (Երեսունմեկ միլիոն մեկ հարյուր վաթսունինը հազար մեկ հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ գումարը, քանի որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ մասնակիցը խախտել

է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

3" Ընտրված մասնակից ճանաչել հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից՝ Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ին և «ԷՅ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ-ին:

4. ՊԵԿ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով հրատապ բաց մրցույթը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ին և «ԷՅ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով)՝ «ՄԵԴԻՍՈՆ ԷՅԲԼ» ՍՊԸ-ից և «ԷՅ ԸՆԴ ԷՄ» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4:

Գնահատող հանձնաժողովի նիստը նախագահող՝ Դ.Հարությունյան

Անդամներ՝ Հ.Ոսկանյան

Կ.Բայբուրտյան

Գ.Գևորգյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան